

9-րդ դասարանի ավարտական քննության ուղեցույց

2012 թ. «Քիմիա» առարկայի ավարտական քննության համար որպես հիմք և սկզբնաղբյուր են ընդունվում գործող ուսումնական ծրագրերը, դպրոցական դասագրքերը և խնդրագրքերը:

1. Քննվող նյութի բաժինները

Հ/Հ	Թեմա	Մոտավոր համամասնություն (%-ով) ըստ դասաժամերի
1	Ընդհանուր քիմիա	58
2	Անօրգանական քիմիայի տարրական հիմունքները:	34
3	Օրգանական նյութերի վերաբերյալ նախնական պատկերացումներ:	8
	Ընդամենը	100

2. Թեստի կառուցվածքը և գնահատման կարգը

Թեստը ներառում է 32 առաջադրանք (35 միավոր):


1-ից 22-րդը ընտրովի պատասխանով առաջադրանքներ են, որոնցում ընդգրկված են քիմիայի առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները: Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրը կատարելու համար ընտրված պատասխանի համարը պետք է վերցնել շրջանակի մեջ և «X» նշանով նշել ձևաթղթում:

Օրինակ՝ Համապատասխանեցրեք ներկայացված ռեակցիաների հավասարումները և ռեակցիաների տեսակները:

- | | |
|--|--------------|
| 1) $2Al + 3Cl_2 = 2AlCl_3$ | ա) քայքայման |
| 2) $Ba(OH)_2 + H_2SO_4 = BaSO_4 + 2H_2O$ | բ) միացման |
| 3) $2Cu(NO_3)_2 = 2CuO + 4NO_2 + O_2$ | |
| 4) $Fe + H_2SO_4 = FeSO_4 + H_2$ | |

Ընտրեք ճիշտ պատասխանների շարքը:

- 1) 1ա, 2բ
 2) 2ա, 4բ
 3) 3ա, 1բ
 4) 4ա, 3բ



23-ից 30-րդը կարճ պատասխանով առաջադրանքներ են : Դրանց պատասխանները թվեր են: Ստացված պատասխանների միայն թվային արժեքն պետք է գրանցեք ձևաթղթի համապատասխան մասում:

Օրինակ՝ (26-27) Էլեկտրոնային հաշվեկշռի եղանակով հավասարեցնել նշված քիմիական ռեակցիայի սխեման՝ $Al + H_2SO_4 \rightarrow Al_2(SO_4)_3 + H_2 \uparrow$:

26. Որպես պատասխան նշել վերականգնիչի գործակիցը:

Պատասխան՝ 2

27. Որոշեք փոխազդած ալյումինի զանգվածը, եթե ռեակցիայի արդյունքում առաջացել է 171 գ ալյումինի սուլֆատ:

Պատասխան՝ 27

26	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text" value="2"/>
27	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text" value="2"/>	<input type="text" value="7"/>
28	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
29	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
30	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>

31-րդը և 32-րդը ընդարձակ պատասխանով առաջադրանքներ են:

31-րդ և 32-րդ առաջադրանքները կատարելու համար պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ողջ ընթացքը՝ պահանջվող քիմիական հավասարումներով, բանաձևերով, բոլոր քայլերի գրանցումով, հաշվարկներով և ստացված պատասխանով: 31-րդ առաջադրանքի լուծումը գնահատվում է առավելագույնը 2 միավոր (քայլը՝ մեկ միավոր), 32-րդ առաջադրանքի լուծումը գնահատվում է առավելագույնը 3 միավոր (քայլը՝ մեկ միավոր):

օրինակ՝ 32. Ֆոսֆոր ստանում են կալցիումի ֆոսֆատից: Վերջինս ենթարկում են ջերմային քայքայման և ստացված արգասիքներից՝ ֆոսֆորի (V) օքսիդը վերականգնում են կոքսով: Որքա՞ն (գ) կալցիումի ֆոսֆատ է անհրաժեշտ ճնդլ ֆոսֆոր ստանալու համար:

Խնդրի լուծման քայլերը՝

1. $Ca_3(PO_4)_2 = 3CaO + P_2O_5$	
2. $P_2O_5 + 5C = 5CO + 2P$	
3. կատարված է համապատասխան հաշվարկ՝ պատ՝ 930գ	

Խնդրի գնահատման չափանիշները՝

եթե նշված 3 քայլերն էլ ճիշտ են գրառված	3 միավոր
եթե ճիշտ է գրառված որևէ 2 քայլ	2 միավոր
եթե ճիշտ է գրառված որևէ 1 քայլ	1 միավոր

3. Միավորների բաշխումը

Ըստ առաջադրանքների տիպերի միավորները բաշխվում են հետևյալ կերպ.

1. ընտրովի պատասխանով առաջադրանքներ՝ 22 միավոր
2. կարճ պատասխանով առաջադրանքներ՝ 8 միավոր
3. ընդարձակ պատասխանով առաջադրանքներ՝ 5 միավոր